# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակում է պրտասահմանյան երկրներում գործող հայկական վարժարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, միօրյա և այլ տիպի կրթօջախներում դասավանդող հայագիտական առարկաների ուսուցիչներին, տնօրեններին/ուսումնական մասի տեսուչներին՝ վերապատրաստման ծրագիրը:

Հայաստանում վերապատրաստումն ընթանալու է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարբերակված հետևյալ 6 մեկամսյա ծրագրերով.

Ա. Ուսուցում մանկապարտեզում
Բ. Ուսուցում մեկօրյա դպրոցում
Գ. Տարրական ուսուցում
Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում
Ե. Դպրոցների կառավարում
Զ. Լրացուցիչ կրթության և արտադասարանային դաստիարակության կազմակերպում (երգ, պար, թատրոն, նկարչություն, ձեռագործ և այլն)

Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության վկայագրեր:

Գործող ուսուցիչների համար մասնակցության սահմանափակումներ չկան:

Ծրագրի ընթացքում դասընթացների կազմակերպման, ուսուցիչների կեցության և շրջագայության ծախսերը, ծրագրի բացման օրվանից մինչև փակման օրը, ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը, ներառյալ օդանավակայանից մինչև հյուրատունը և Հայաստան մուտքի արտոնագրի (վիզա) ծախսերը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Վերապատրաստման սկիզբը համարվում է ծրագրի մեկնարկային օրը՝ հուլիսի 04-ը:

Ծրագրի ժամանակացույցը հետևյալն է.

| | |
|---|---|
| 03 հուլիսի՝ | հյուրատուն մուտքի և տեղավորման օր |
| 04 հուլիսի՝ | ծրագրի բացում |
| 30 հուլիսի՝ | հյուրատանից ելքի օր: |

Ավելի վաղ ժամանելու կամ ուշ մեկնելու դեպքում՝ կեցության ծախսերը հոգում են մասնակիցները: Այս պարագայում՝ մասնակիցների համար կսահմանվեն հյուրատանը մնալու զեղչված գներ: Հյուրանոցի սենյակները նախատեսված են 2-4 հոգու համար:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **<u>մայիսի 31-ը</u>** ներառյալ ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել.

1. Ուսուցչի կողմից լրացված և կրթօջախի տնօրինության կողմից վավերացված հայտը (հայտաձևը կցվում է):

Մասնակցության պաշտոնական հաստատումներն ուսուցիչները կստանան իրենց էլեկտրոնային հասցեով մինչև հունիսի 8-ը ընկած ժամանակահատվածում: Երկրից և աշխատավայրից բացակայության հիմնավորման համար պաշտոնական հրավերի անհրաժեշտության դեպքում՝ խնդրում ենք տեղեկացնել նախապես:

Ծրագրերի ընդհանուր նկարագիրը և հիմնական դասախոսների ցանկը, ինչպես նաև հյուրատան հասցեն և կեցության հետ կապված այլ տեղեկություններ կփոխանցվեն մասնակցության հայտ ներկայացրած ուսուցիչներին հունիս ամսվա ընթացքում:

Մասնակիցների համար նախատեսվում են նաև հանդիպումներ, ճանաչողական-ուսուցողական շրջայցեր և մշակութային ծրագիր:

Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ կրթության և գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնից.

Հեռ. 374 10 58-13-91
Ֆաքս. 374 10 52-73-43
Էլ. փոստ. spyurq@yahoo.com կամ info@edu.am

Առդիր՝ մասնակցության հայտաձև /1 էջ/:

**ՆԱԽԱՐԱՐ՝**

**Արմեն ԱՇՈՏՅԱՆ**